

## ԳԼՈՒԽ Գ

Մեր Կամսարականն եւ քեռորդին մտան յունաց բանակը, որ Վաղարշակերտի շուրջը տարածուէր էր: Հռոմեական անունը թեպէտ կը պահէին Բիւզանդիոյ կայսերք, եւ արտաքին փայլը դեռ կ'երեւար, բայց ամէն բան եւ զինուորութեան ամէն կարգ, կանոն թուլցած, աւրուած էր, հռոմեական արծիւն էր, որ լեգէոններուն գլուխը թելերը կը տարածէր, բայց թշնամուոյն առաջին դիմադրութեան եւ հարուածին կը սլանար ի փախուստ, եւ այդ լեգէոնները միշտ մեծ քաջութիւն ցոյց կ'ուտային ներքին խռովութիւնք հանելու քան թէ թշնամուոյն դէմ պատերազմելու:

Եթէ զինուորին քով վատութիւն եւ անկարգութիւն սովորական էին դարձած, զօրավարները նաեւ շատ անգամ շնորհուկով անուանեալ եւ ոչ արժանաւորութեամբ գոռոզ յանձնապաստան եւ անարգ պալատական՝ հրամայել միայն դիտէին խաղաղութեան ժամանակ քան թէ առաջնորդել պատերազմի մէջ: Այսպիսի անձ մի էր Պրոկոպիոս, որ այս հռոմեական անուանեալ բանակին Սպարապետն էր, եւ որ Թեոդորոսի թախանձանոք եւ յորդորանոք հազիւ կրցեր էր շարժիլ եւ հասնիլ Կարնոյ ի Բագրեւանդ ամենայն դանդաղութեամբ:

Ուստի Սուրէն եւ Գրիգոր երբ մտան բանակը, ուղղուեցան Սպարապետին վրանը, որու դռան առաջ շարուած կանգնած էին հայ զօրավարին թիկնապահները: Երբ Սուրէն ուզեց անցնիլ, յոյն արարողապետը իմացուց թէ արգելք կար ներս մտնելու, թեպէտ ձայները բարձր եւ զայրագին կը լսուէին:

Թեոդորոս փորձ պատերազմող՝ առաջին ակնարկին տեսաւ, որ այդ բանակը թէւ բազմաթիւ, բայց օգուտ չունէր երկրին իւր անշարժութեան մէջ, երբ թշնամի մը կար իւր առջեւ յանդուզն եւ կատաղի, որ մինչեւ այն օր յաջողէր էր իւր ամէն արշաւանաց մէջ, եւ այդ յաջողութեան համար յանձնապաստան այնչափ, որ կը համարձակէր թշնամի մեծ բանակի մը առջեւ երկուքի բաժնել իւր զօրութիւնը: Ուստի յորդորեց զպրոկոպ արագ յարձակմամբ հասնիլ Արտագ, խորտակել արաբաց մեծ գունդը եւ միւսին, որ անցել էր Երասխը նահանջի ճամփան արգիլել եւ բնաջինջ ընել: Այս պարզ առաջարկութեան յունաց զօրավարը գոռոզութեամբ պատասխանեց.

Ես կայսերական բանակին մեծ Սպարապետ՝ ունիցէ մարդու եւ մանաւանդ հայ իշխանի մը խրատուն կարօտութիւն չունիմ, քու պարտքդ ինձ հնազանդիլ է եւ